Ա. ՏԱՐԻ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 24 ՔԱՂՈՑ 4383 — Հ. Տ 1 ՅՈՒՆՈՒԱՐ 1892 ԹԻՒ 4

ԴԱՆՈՒԲ

LE DANUBE

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիստանի համար տարեկան բաժանորդագինն է 8 ֆր. եւ կամ 3 ռուբլի թղթադրամ. կանխիկ վճարելի։

Ուրիշ ամէն տեղի համար տարեկան բաժանորդագինն է 12 ֆր. եւ կամ 5 ռուբլի թղթադրամ, կանխիկ վճարելի։

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ։

—

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է։ Հայերէն Պուլկարերէն եւ Ֆրանսերէն լեզուով։

Խմբագրութեանս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Նամակ եւ ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով։

M .S. TUTUNDJIEFF
Rédacteur du journal "TANOUP"
(BULGARIE) ROUSTCHOUK

1892

—

ՈՂՋՈՅՆ ԱՌ ԸՆԹԵՐՑՈՂՍՆ. Նոր տարի կ'սկսինք նոր պահանջներ և նոր կարիքներ մեզ կը ներկայէն, առաջին պահանջն այն է թերեւս որ ընթերցողներէ շատերն կ'ուզեն թէ "ԴԱՆՈՒԲ„ մեզ ինչո՞ւ Շնորհաւոր Նոր Տարի և բարեբաստիկ օրեր չի բարեմաղթեր. բայց "ԴԱՆՈՒԲ„ը ինչպէս նաև իր ընթերցողները միշտ վարժ են եղած լսել աւելի կարող հրապարակագիրներէ աւելի շողշողուն և աւելի փայլուն բառերով բարեմաղթութիւններ առանց մի օր այդ բարեմաղթութեանց իրականացումը տեսնելու։ Ուստի արդոյ ընթերցողք, Նոր Տարւոյ առթիւ մեզնէ չը սպասէք փքալից և օդալից բարեմաղթութիւններ, անիրագործելի խոստումներ և դրամ կորզելու կեղծ միջոցներու նախապատրաստական ծրագիրներ։

Մեր առաջին իղձն է տեսնել բովանդակ Հայութեան մէջ ներքին համերաշխութեան մի կապ և այդ կապով ամէն նոր տարւոյ առաւօտ միմեանց ձեռք սեղմելով ուրախ զուարթ ողջունենք զիրեար, դարերու փորձառական պատմութեամբ տեսանք որ այդ կապի չգոյութեան երեսէն միշտ մնայինք միմեանցմէ անջատ և օտարի համար պատրաստ կեր։

Այդ, ազնիւ գաղթական ազգայինք, համառօտակի յետահայեցաց մի տեսութիւն ընենք մեր տասնեակ տարիներ առաջ ունեցած տխուր անցեալի վրայ, ինչ՞ էին մեր Պուլկարաբնակ և Ռումանաբնակ ազգայնոց վիճակներն, առանց երկար բացատրութեանց ամէնքս ալ կը խոստովանինք թէ խիստ սև էր, զի ամէնքս ալ օտարաբարբառ, ամէնքս ալ ցրուացեալ ազգային կեանքէ և յառաջդիմական պահանջներու անգիտակ, ենթակայ օտարին մահաբեր բաղձին մէջ նետուելու և ինչպէս որ մեզմէ մեծ մասը դժբաղդաբար անխնայ և անանուն կորուեցան և լուծուեցան զինքը շրջապատող այդ տարերաց մէջ, մեր այս տըխուր կացութեան անտարբեր հանդիսատես էին Կ.Պոլսոյ անուանական մեռեալ Պատրիարքարանը և Էջմիածնայ անճահ ու անշահ վանական շահատակութիւններով ծանրաբեռնեալ Կաթողիկոսութիւնը, որպէս թէ մենք այս երկու ազգային գերագոյն մարմիններէ համար խորթացեալ զաւակներ լինէինք, բայց գէթ այժմ ուրախ ենք որ անոնք ալ սթափեցան և ազգային իրենց այս մեծ և դատապարտելի սխալանքը, շնորհիւ մեր դարավերջին օրկաններու և այդ պատուական օրկանք ոչ միայն անոնց սթափեցուցին իրենց ծուլական նիրհէն, այլ նաև մեր գաղթական ազգայնոց. ո-

րով զգացինք մեր թերութիւնք, թէպէտ և այդ օրկանք աւելի աւիւնէ և երիտասարդական եռանդէ թելադրեալ քանթէ լուրջ հասկացողութենէ ինքզինքնին մատնեցին աւելի յախուռն և աւելի մեծ ձեռնարկների որով ստիպեցին զմեզ ճնշեալ սահմանի մէջ տեղական յառաջդիմական հարցերով զբաղուիլ միմիայն. բայց քանի որ գիտեմք թէ ամեն մի անհատ ազգութիւնը կազմող շղթայի մի օղակն է և մեք ալ իբր այդ մի օղակն այդ կարգին մեր նուիրական պարտքը կատարելու փորձն սկսած եմք հրատարակելով զ"ԴԱՆՈՒԲ„, իցիւ՜ թէ գէթ մասամբ իւիք կարողանայինք մեր ուղղութեամբ Դանուբի երկու եզերքներու Հայ գաղթականութեան մի օգտակար ծառայութիւն մատուցանել և իրաւունք ունենալ ճակատաբաց լաւ բարեմաղթութիւններ ընելու ամեն մի նոր տարի բոլորած ատեննիս, այս է մեր իղձը և այս իղձէն թելադրեալ կ'աղօթեմք առ Տէր, որ պարգևէ մեզ ՍԻՐՈՅ ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹԵԱՆ և ՅԱՌԱՋԴԻՄՈՒԹԵԱՆ նախադուռներ։

Մ. Թ.

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆ «ԴԱՆՈՒԲ»Ի 1 ԵՒ 2 ԹԻՒԵՐՈՒ ՄԷՋ ՏԵՄՆՈՒԱԾ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՅՕԴՈՒԱԾԻ ԱՌԹԻՒ

Ա.

"ԴԱՆՈՒԲ„ի սուղ էջերու մէջ ամբողջ Հայութիւնը զբաղեցնող կաթուղիկոսական խնդրոյ վերայ մի անպատեհ գրուածք տեմնուեցաւ. անկարելի է ուշադրութեան չառնուլ այն կէտը, որով յօդուածագիրը՝ կաթուղիկոսական գահը Ռուսաստանէ յայլուր փոխադրելու հարցը կը ջանայ Հայութեան օգտակար ցոյց տալ. մի հարց, որ ամեն կաթուղիկոսական ընտրութեանց ճգնաժամին խրտուիլակի նման իր դէմքը ցոյց կը տայ Հայուն. ամեն անգամ ալ այդ հարցը յուզողք չեն կարողացած իրենց ձայնը լսելի ընել տալ. պատճա՞ռ. արդեօք այդ գրիչներն իրենց ստանձնած դերը հասկցնելո՞ւ թէ հասկնալու անկարող են, այո՛, այդ երկու թերութիւններն ալ ունին ուշադրութեան չառնելով քաղաքական պահանջումներն, և անտեսելով ազգային նուիրական հանգամանքներն։ Թող ներուի ինձ հարցնել ազնիւ յօդուածագրոյն, թէ Ռուսիա պիտի յօժարի՞ ներել որ Հայոց ընդհանուր կաթուղիկոսը իր գահը հանդերձ պարագայուք տանի հաստատէ յայլուր թէ Իտալիոյ նման չպիտի մտածէ երբ Պապը իր գահը Մալթա կը փոխադրէ։ Ներուի ինձ հարցնել ազնիւ յօդուածագրին թէ Թուրքիա պիտի յօժարի՞ աւելի ազդեցիկ ու աւելի հօծ ժողովուրդի տէր մի նոր Մար-Շիմօնութիւն հաստատուի իր հողին վերայ, ինչպէս կ'երազէ ազնիւ և եռանդոտ Յօդուածագիրն. արդեօք այդ հարցը յուզողներն պիտի կարենան ապահովել Ռուսահայոց ապագայն, որ հաւանական հաշուով աւելի պիտի վտանգուի ընդհանուր Հայոց Հայրապետի հսկողութենէն զրկուելով, որոյ ունեցած իրաւասութեանց մէկ հազարերրորդը չի պիտի կարենայ ունենալ Էջմիածնայ աթոռը պահպանող մանաւոր մի Պատրիարք, որ այլևս ընդհանուր Հայոց Հայրապետը չէ, այլ միայն Ռուսահայոց ոչ-ազդեցիկ Պատրիարքը. բաւ է միայն հարցնել թէ մի կաթուղիկոսի ներկայութեան Կօզակնիր պիտի համարձակէ՞ին Վեհարանի դուռը ափ առնուլ, ինչպէս ըրին վերջին օրերս մի տեղապահի պաշտօնավարութեան ատեն, յանձին երկու եպիսկոպոսներու. ոչ, վասնզի երկու եպիսկոպոսք երբ անակնկալ մի հարուածէ շուարած իրենց պաշտպանը կը փնտռէին Լուսաւորչայ գահուն վերայ հայոց ընդհանուր Հայրապետը կը պակսէր, Նորին Վեհափառութեան տեղ ապիկար մի տեղապահ կար, որոյ խտէալն էր ինքզինքը կամ իր սիրելին կաթուղիկոս տեսնել 'ի հրճուանս և 'ի խինդ ազգեր կուլ տուող Ռուսականութեան. Ռուսիա չուզեր և չի յօժարիր որ, ընդհանուր Հայոց Հայրապետը իր հողէն դուրս մի օտար և անկախ հողի վրայ հաստատուի, երբ Հայը ճնշողի ձեռքը զօրաւոր է և նրա ձայնը երկրագնդի կէս մասին վերայ ծանր կերպով կը կշռէ մեր անփորձ յօդուածագրի այդ երազը ձախող մի փորձ է, վասնզի անկարելի է որ Հայուն այս անպաշտպան վիճակին մէջ այդ անուրջը իրականութեան փոխուի. Հայը լաւ կ'անէ փոխանակ Սպանիական դղեակներու շինութեամբ զբաղուելու՝ իր աւանդական հին շէնքը լաւ մի նեցուկով պաշտպանէ. քննենք ուրեմն աշխարհակալ Ռուսիոյ դէպ 'ի մեր Էջմիածին ունեցած հայեցակէտը և ըստ այնմ վարուիմք. ի՞նչ է այդ որոշ և վճռական հայեցակէտը. "Յաճախ կաթուղիկոսական սև մահերով ծագած ընտրութեանց փափուկ պարագաներու ատեն, մաս մաս յօշոտել Էջմիածինը իր իրաւասութիւններէն և մի օր զէրօի վերածելով զայն, 'ի սպառ բառնալ աշխարհի երեսէն ընդհանուր Հայոց Հայրապէտի զօրութիւնը„ Աստուած գիտէ թէ Ռուսը պիտի հասնի՞ իր նպատակին. . . . Հռոմայեցւոց զօրաւոր կայս-

րութեան պատմութիւնը, այսօր կութթեմպերլի գիւտին շնորհիւն է որ կը կարդամք. . . . ։ Արդ Հայութիւնը ի՞նչ պարտի անել և ի՞նչ դիրք բռնել զինքը հալածող այս զօրաւոր այլ առժամանակեայ հոսանքի դէմ։ ընդհանուր Հայոց Հայրապետութիւնը Էջմիածնէ յայլու՞ր փոխադրել. դա անկարելի մի անուրջ է. ինքզինքը ճակատագրի յանձնելով ծերունի մի եպիսկոպոս նորէ՞ն ընտրել, դա անարի և ծիծաղելի մի ձեռնարկ է խիստ մերձաւոր մի օրինակ ունիմք աչքերնուս առջև. կամ եռանդոտ, փառասէր և ազգատեաց մի Կաթուղիկոս ընտրելով յանձնե՞մք ազգի ապագայն նրա ձեռք. դա սոսկալի և դատապարտելի մի ձեռնարկ է, զոր կը պատրաստուի ընել Հայութիւնը։ Հայը պէտք է ընտրէ Էջմիածնայ գահուն համար մի Կաթուղիկոս, որ ըլլայ քաղաքագէտ, շրջահայեաց, ազգասէր, ուսեալ, կամքի տէր և գործել գիտցող։

Ռուսահայոց եպիսկոպոսներու գործերն մեզ անծանօթ են, չեմք կարող մի ընտրելի ցոյց տալ նըրանց մէջէն, պարտաւորեալ եմք այս մասին խոստովանութիւնն ընելու, վասնզի նրանց մէջ ամենալաւ գործողք անգամ այնքան ճնշեալ և նեղ շրջանակներու մէջ կ'ապրին, որ շատ մօտէն միայն կարելի է ճանչնալ զիրենք և մարդ հոգեբան ու ժողովրդագէտ լինելու է նրանց սրտերն կարդալու համար. մեզ անկ է ունենալ միայն այն կոյր հաւատքը որ Ռուսահայոց եպիսկոպոսաց մէջ խիստ ընտիր և արժանաւոր Կաթուղիկոսացուներ չեն պակսիր, այլ հեռաւորութեան պատճառով չեմք կարողացել ճանաչել զայնս. մեր ունեցած ծանօթութիւնը լոկ Թրքահայոց եպիսկոպոսներու վրայ ըլլալով կը փութամք անոնցմէ ամենէն արժանաւորագոյններն ցոյց տալ։

Ա. Խորէն Արքեպիսկոպոս Լուսինեան. քաղաքագէտ, Աստուածաբան, բանամիտ, ուսումնական, լեզուագէտ և օժտուած Կաթուղիկոսական գահը վարելու անհրաժեշտ հանգամանքներով։

Բ. Մաղաքիա Եպիսկոպոս Օրմանեան. ընտիր աստուածաբան, քաջ օրէնսգէտ, լաւ վարչագէտ, ուսումնասէր, լեզուագէտ, ներհուն և տաղանդաւոր գլխու տէր։

Գ. Գրիգորիս Եպիսկոպոս Ալէաթճեան. ազգասէր, անաչառ, գործող քան խօսող, պարկեշտ, արի, կորովի, փորձ վարչագէտ, ժողովրդասէր և անձնուրաց։

Դ. Ստեփաննոս Եպիսկոպոս Յովակիմեան. ժողովրդասէր, շինող, պարկեշտ, անձնուրաց, վարչագէտ, չի հոգնող, ուր որ ցաւ կայ, վէրք կայ, կռիւ կայ, կը սլանայ հոն, կը մոռնայ ինքզինքը. գիտէ պարագային համեմատ ներբութեամբ խօսիլ արիութեամբ գործել. կը յարգէ տիրող սարքը, կը սիրցընէ ինքզինքը կը յաջողցնէ նպատակը ապացոյց քաղաքագիտութեան. գիտէ գործածել իր ստորակարգեալներն ապացոյց վարչագիտութեան։

Այս չորս անձնաւորութիւններէ դուրս մնացածներն կամ մասնակի հանգամանաց տէր են. կամ անքաղաքագէտ են, կամ դառամեալ են, կամ անփորձ երիտասարդներ են, կամ զուգադիպութիւններով ժողովրդականութիւն շահողներ, կամ իրենց բարեմասնութեանց քով կցած են փառասիրութիւն ու շահամոլութիւն. մի փոքրամասնութիւն ալ կայ որ ագէտ, խառնակիչ, անսկզբունք և Հայ կղերականութեան պատիւը նսեմացնող անխիղճներէ կազմուած է զորս մանրամասնին գիտելով «ԴԱՆՈՒԲ»ի յօդուածագրին նման մէկ հարուածով չեմք ուզեր ջախջախել Հայ կղերը. այլ կ'զգուշացնեմք Հայը այդ վատ փոքրամասնութենէն։

Հայոց ընդհանուր Հայրապետութիւնը Էջմիածնէ յայլուր փոխադրելու հարցը յուզողներու մենք գիտել տալինք մեր յօդուածի սկիզբը թէ. «կ'անտեսեն ազգային նուիրական հանգամանքներն» պարզենք մեր նկատումը։ Արդեօք գիտե՞ն այդ հարցը յուզողներն որ Լուսաւորչայ գահուն կցեալ ԷՋՄԻԱԾԻՆ բառը ի՞նչ մեծ նշանակութիւն ունի. և ինչ նուիրական, սուրբ, ակնածելի և զօրաւոր տեղ մը կը բռնէ 'ի սփիւռս աշխարհի ցրուեալ Հայ սըրտերու մէջ։ Ո՞վ եղաւ Էջմիածնայ ճարտարապետը, ինչպէս դրաւ նրան հիմը և ինչո՞ւ դրաւ, արդեօք մի օր «ԴԱՆՈՒԲ»ի յօդուածագրի նման Հայ բարենորոգիչներներէն քանդուելո՞ւ համար հիմնեց այդ Աստուածաշէն գահը, և թէ այդ գերմարդկային ճարտարապետը պիտի յօժարի 'ի Թրքահայս կամ 'ի Պարսկահայս. 'ի Հնդկահայս կամ յայլ Հայ գաղութս իջնել և հիմնել մի այլ Էջմիածին, եթէ այդ հարցը յուզողք կը յանդգնին այդ Աստուածային շնորհքն մեզ ընել, կրնա՞ն ապահովել Հայութիւնը որ իրենց հեղինակութիւնը մի դառն վէրք չի պիտի աւելցնէ թշուառ Հայուն սրտին, ինչ որ եղած են Սսոյ և Աղթամարայ Կաթուղիկոսութիւնք։ Մեր ազնիւ ընթերցողք անշուշտ համոզուեցան որ ինչ աստիճան անտեղի և ձախող է տեղափոխութեան հարցը յուզելն և մեզ ալ ներեցին որ այդ յայտնութիւնը խրատուիլակի դէմքի նմանցուցինք։

Բ.

Գալով յօդուածագրի Խրիմեանի նկատմամբ շարած սև տողերուն կը յայտնեմք թէ շատ անզօր

են մեր սիրեցեալ Հայրիկի փառքը նսեմացնելու, արդի և ապագայ Հայութիւնը շատ ապերախտ պիտի լինի, եթէ նոյն ուղղութեամբ վերաբերուի առ վշտակիր և ծերունազարդ Սրբազանն որ պարտաւորիչ հարկերէ ստիպեալ գնաց ապաւինիլ 'ի Գողգոթայ։ Մենք շուարած եմք և չեմք գիտեր ինչ տեսակ բացատրութիւն տալ այդ անպատկառ տողերու, արդեօք Հայ լրագրական ասպարէզը աւելի ապականելու մի փո՞րձ է յօդուածագրի արարքը. թէ կ'ուզէ մի անպատեհ նորութեամբ հրապարակ նետուիլ ու փառք շահիլ. Հայ ազգը Հայրիկի ներելի թերութիւններն ճանչնալով հանդերձ, չի կրնար ուրանալ այն բարձր դերը որ 1860էն 'ի վեր կը կատարէ Հայրիկ. ինչո՞ւ կ'ուրանայ յօդուածագիրն Խրիմեանի այն բարեմասնութիւններն, որով արժանացել է ոչ միայն Հայ ժողովրդէն Հայրիկ կոչուելու, այլ նոյն իսկ տառապեալ և սովալլուկ Թուրքէն և Քուրդէն, Պարսիկէն և Ասորէն, Եզիտիէն և Զազաէն. ինչո՞ւ կ'ուրանայ Հայրիկի հոգեշունչ քարոզներն որ Հայուն քառորդ դարու վերածնման մէջ մեծ տեղ բռնած են. ինչո՞ւ կը մոռնայ Հայրիկի գաւառային գործունէութիւններն. ինչո՞ւ չի թուեր Հայրիկի "Գոյժեր"ն, "Դրախտի ընտանիք"ն, 'ի մի բան բազմաթիւ երկասիրութիւններն, որք կը գնահատուին մինչև այսօր ամենէն ողջամիտ Հայ իմաստասէրներէ։

Ինչո՞ւ կը փնտռես պ. յօդուածագիր. ո՞ր հեռատես և իմաստուն Հայը ուզեց Խրիմեանը կաթուղիկոսացնել, Ձեր ողբացեալ Ռուսինեանի և Օտեանի ընկերք ու աշակերտք մտքերնուն անգամ չեն անցուցած այդ գաղաբարն, իսկ թէ որ Մակարայ և Ներսիսի ընտրութեանց առեն Խրիմեան Հայ ազգէն չի մոռցուեցաւ, դա սիրեցեալ Հայրիկի ժողովրդային գործունէութեանը վարձքն էր և ոչ թէ հեռատեսներու և իմաստուններու կամքը. Հայրիկը Պոլսոյ Պատրիարք ընտրողներն ճանչցած են իրենց սխալը. աթոռներ որք քաղաքական ազգային և կրօնական հանգամանքներով ծանրաբեռնեալ են. ասպարէզ չեն կարող լինել Հայրիկի գործունէութեան, որ միայն սրտէ կը թելադրուի, որ միայն թշուառներու արտասուքը սրբել գիտցած է, առաթուր կոխելով ամեն փառասիրութիւն։ Ցաւալին այն է որ, "ԴԱՆՈՒԲ" խիզախ ազատամտութեամբ, այդ տողերն հիւրընկալած է, եթէ "ԴԱՆՈՒԲ" անաչառ ըլլալ կ'ուզէ թող հրատարակէ իմ այս տողերն որ ամբողջ Պուլկարիոյ և Ռոմանիոյ Հայոց սրտերու մէջ արձագանք պիտի գտնեն։

Հայուն սիրեցեալ Հայրիկը ծերացեալ էր չարաշուք հանգամանքներ իւր թևն ու թիկունքը կոտրատած էին, նախկին արծիւը այլևս չէր կարող իր թռիչներն շարունակել ուր որ պէտք կայ, շատ լաւ ըրաւ որ իր Աստուածորդի վարդապետին խաչին բարևելով կ'արտասուէ ու կը մխիթարուի։ Յօդուածագիրն թող լաւ համոզուի որ շատեր իրմէ աւելի լաւ տեղեակ են Հայ կղերականութեան մի մասին տխուր այլ սքօղեալ անցքերուն բայց նոքա գիտեն նաև դատել որ Հայ կղերականութեան պարկեշտ շէնքը տապալելու ժամանակը դեռ շատ և շատ հեռու է. բնաւ պէտք չէ յանդգնիլ կործանելու այն շէնքը որոյ տեղ մի ուրիշը հաստատել անկարելի է. եթէ վերցնեմք Հայ ազգին մէջէն կղերը, որ բաղդատմամբ ուրիշ ազգաց կղերին աւելի պարկեշտագոյն է, ի՞նչ պիտի հաստատեմք նրան տեղ իբր պահապան, լրագրութիւ՞նը որ անձուկ բացառութեամբ ապականեալ իմաստակ և շահամոլ է։ Հայ դասատուութիւ՞նը, որ դեռ օրօրոցի կեանքին մէջն է. ո՞ր Հայ գոյութիւնը պիտի բռնէ Հայ կղերի տեղը. ուրեմն ինչո՞ւ դպչիմք ժողովուրդին պահապանին ի՞նչ յանդգնակ և Ֆրանսական նորութիւն է սա։ Եթէ Յօդուածագիրն այդչափ բծախնդիր է Հայ վանքերու և առաջնորդարաններու մէջ "Ժան Ժագ Ռուսօի խոստովանութեանց" նման տխուր տեսարաններ չունենալու, թող բարեհաճի [illegible] առատ պաշարով փութայ կուսակրօնաց գտնուած վայրերն և իր բաղձանաց համեմատ Հայ կղերականութեան այդ թերութիւնը ձեռքովը դարմանէ։

Իսկ թէ որ Յօդուածագիրն իր այդ ձեռնարկով կ'ուզէ ազատ մի թերթի հարուա՞ծ տալ, որ երազած էր Խրիմեան Հայրիկը կաթուղիկոսացունել պարապ ձանձրութիւն ըստանձնել է, վասնզի այդ թերթը հակառակ իր նախկին ազգասէր ուղղութեան վերջերս իր բռնած ընթացքովն կորուսած է իր վարկը. նա աւելի շահամոլութեան ասպարէզ դարձած է, և իր հասոյթից նուազութենէն մղեցնած ի՞նչ որ վայել չէ կանէ, ինչ որ ազնիւ ու ազգասիրական է կը հարուածէ. ինչ որ իր շահը կը վտանգէ անխղճօրէն կը մատնէ ու կը հալածէ. և աւելի աննշան պիտի ըլլայ իր գոյութիւնը ու վերջակէտը պիտի դնէ եթէ իր վաղեմի բարեկամներէն մի քանիներ չի ցաւին իր վրայ ու իրենց լուրջ յօդուածներով չի զարդարեն նրա թերթը։ Հետևաբար չէր արժէր որ այդ ձայնեզուրկ թերթի հարուածելու եռանդով, ազգին սիրեցեալ ու պաշտեցեալ Հայրիկի հանգիստը խռովել և Հայ կղերականութիւնը խորշելի ցոյց տալ։

ԽԱՂԱՂԱՍԷՐՆ

ՄԵՐ ՊԱՏԱՍԽԱՆԸ ԱՌ Պ. Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

Մարսիլիոյ «Արմենիա»ի տարեւոյս 37րդ թուոյն մէջ կարդացի ձեր գարշահոտ և միանգամայն անիրաւ բողոքը, անշուշտ ամեն ընթերցողք ձեր տողերու գարշ բուրումներէն նողկանք զգացել են, իսկ ես վերահասու եղայ որ մի տեսակ էնթրիկայի զոհ դարձել է։ Ձեր այդչափ ուշ բողոքը ինձ զգայնել տուաւ զայդ. . . . . ։

Սա անուղղակի և մանուածապատ մի հարուած է անձիս դէմ ուղղուած այն ձեռքէն որ վարժ է քանդել ամեն ինչ ըսկ իր բարեկեցիկ ապրուստին համար։

Կարծեմ Ձեր բողոքի զօրութիւնը կը նսեմանան իմ հետեւեալ յայտարարութեանց ոյժով։

Նախ Ձեր հրատարակութեան վերայ գրած չէք որ «Ամեն իրաւունք հեղինակին կը պատկանի», հետեւաբար անհրաժեշտ մի պարտականութիւն չուներ նախապէս Ձեր հաճութիւնը ստանալ (ՅԷ ԿՍ ՍԵԼԻ ՅԻՇՈԸ ԸՆԵՐԵՎ Դ ԷՏՈՒԹՅՈՒՆ) և յետոյ արտատպել «կտակը»։ Երկրորդ, դուք. հաճեցէք համոզուիլ պարոն, որ Ձեր գրչով չէք ծառայէր Ֆռանսացի, Անգլիացի, կամ Գերմանացի են՝ լուսաւորեալ ազգերու, որով կարենաք յուսալ թէ, Ձեր ամեն տողերն ոսկւով պիտի պատրաստուին, դուք կը ծառայէք Հայ ազգին որ գերեզմաններ գիտէ միայն վարձատրել. ահա, անմահն Բաֆֆի և Պարոնեան, այս երկուքը թող բաւական ըլլան զՁեզ համոզելու այս մասին, ես այս ճշմարտութեան հաւատացել եմ և մինչև ցարդ իմ բոլոր գրական աշխատութիւններ անվարձ ու սիրով նուիրած եմ ազգիս, և այս տողերուս ճշմարտութիւնը կրնաք ստուգել Ձեր անիրաւ բողոքը հիւրընկալող թերթի պ. արտօնատէրէն, իսկ եթէ դուք նպարավաճառի շահամոլական եռանդով կ՝աշխատիք, Ձեր ազգայասիրութիւնը և անհասկացողութիւնը կը հաստատէ. որոյ մասին չեմ կարող ծիծաղս բռնել։

Ձեր գրական գործունէութիւնը ոսկւով վարձատրելու համար նիւթական հարստութիւն չունէի, այլ իմ զոհաբերութեանցս շարքին մէջ Ձեզ օգտակար լինելու բաղձանքով իբր նմոյշ ուզեցի հիւրընկալել Ձեր մեկ վէպիկը «ԴԱՆՈՒԲ»ին էջերուն մէջ որպէսզի Հայ գաղթականութիւնը կարդայ զայն և ծանօթանայ Ձեր անուան ու գնէ Ձեր գրուածներն, իմ այս վիճակիս մէջ ասկէ աւելի մի ծառայութիւն չէի կարող մատուցանել Ձեզ. չի կարծէք որ «ԴԱՆՈՒԲ»ի գործունէութեան համար պաշար կը պակսի, հարուստ է նա այս մասին. այլևս չեմ հրատարակեր Ձեր վէպիկի շարունակութիւնը. դուք հանգիստ սրտով և անխռով խմեցէք Ձեր գարէջուրը ժընէվի սրճարաններու մէջ, ո՛չ Ձեր ազգը և ոչ ալ Ձեր ընտանիքը. . . . . խորհելով, գիտցէք որ եթէ 'ի մօտոյ յետս չի կոչէք թերթիս դէմ Ձեր ըրած նախատինքներն պիտի պարտաւորիմ Ձեր ուղղութեամբ վերաբերել դէպի Ձեզ. անբասիր կեանք ունեցողներն միայն կրնան մեծ մարդ լինել և մեծ մարդիկ միայն իրաւունք ունին անպատուութիւն համարել իրենց ընծայուած մի ծառայութիւն. և դուք Ձեր հոգւոյն ու սրտին որոշ գոյնովն վարձատրած էք իմ առ Ձեզ մատուցած ծառայութիւնն։ Ձեր այդ բողոքը գըրած ատեն չի խորհեցա՞ք որ դուք էիք Վիէննայէն Ձեր գրքերն ղրկողը, որպէսզի ծախեմ։ Ես ո՛չ Ձեր թոշակաւոր գործակալն եմ և ոչ գրավաճառ, խնդրեմ փութով իմացնէք ինձ թէ որո՞ւ յանձնեմ զայնս։

Այս առթիւ կը յայտնեմ ազնիւ պ. Աբել Ապրէսեանցի նաև՝ որ բարեհաճի տեղս ցոյց տալ մի անձ որոյ կամենամ յանձնել պ. Վ. Փափազեանցի գրեանքը. զի չեմ յոժարիր այս կարգի անձի մը ծառայութիւն մատուցանել, մինչև անգամ վարձքով. զի ես իմ ապրուստս ունիմ և իմ արժանիքս չեմ ուզեր ստորնացնել այդպիսեաց անմարսելի դրամով։

Մ. Թ.

ՁՕՆ

Ա Ի «ԴԱՆՈՒԲ»

ԳԱՆՈՒԲԸ

Դանո՛ւբ, գետ ցայնանիստ,
Մերթ խրոխտ մերթ հանգիստ,
Մերթ զուարթ մերթ տխուր,
Կը հոսիս դէպ ի ուր?

Դանո՛ւբ, գետ ցայնարնակ,
Չի՞ դիտես յաջ յահեակ,
Իր վտակ առ վտակ?
Կը սահիս համարձակ:

Իր այդպէս վեհ ի վեհ?
Ծածանիս դուն յահեհ,
Հանդարտե՛ սակաւ ինչ,
Որ շինիս պայծառ ջինջ:

Ո՛ղիբ, վրտակ եւ գետակ,
Քեզ շինին հետեւակ,
Զոր առած կը տանիս
Դէպ ի ուր ասա՛ ցիս?

Դուն դիարերեւ ի վեր
Կ՝ընթանաս անվհեր.
Ափերդդ տարագիր
Ուր?– ի ծով ցայնանիստ:

ՆԺԴԵՀ

ՎԱՌՆԱ 20 ԴԵԿՏ. 1891

Տէր խմբագիր,

Ա.յս օրերս քաղաքէդ ասա ժամանող ազգային-ներէ ցաւ 'ի սիրտ լսեցինք մի ձրի զրպարտութիւն մեր քաղաքի Հայ բնակութեան նկատմամբ, այսինքն թէ ասա գոյութիւն ունեցած ըլլայ մի «Փողովրդական Մանաժողով» և այդ անգոյ մանաժողովի կողմանէ պատուական և անկողմնակալ Հանդիսիդ նկատմամբ անպատուաբեր ազդարարութիւններ քաղաքիդ Հայ թաղի պատերուն վրայ մէկ երկու օրինակ փակցնել և հրաւիրել Ռուսճուգցիներուն նաև որ միանան մեզ հետ և պատուական հանդէսդ խափանելու ջանալ։ Ա.յս առթիւ յանուն ճշմարտութեան և մարդկութեան կը յայտարարեմք և բացարձակապէս կը հերքեմք թէ ասա 'ի Վառնա «Փողովրդական Մանաժողով» անուն մարմին մը գոյութիւն չ'ունի, և ո՛չ ալ այդ օրինակ լրբութեանց մի ձեռնարկու մարմին. քաղաքիս մէջ խիստ մեծ համակրութեամբ ընդունուեցաւ Հանդէսդ բոլոր ազգայնոց կողմանէ, և ամեն շրջանակի մէջ գովեցին թէ «ահա՛, մի թերթ որ անաչառ և անկողմնակալ ոգւով մեզ հետ կը խօսի. այլ ոչ նման այլ թերթերու մեր դըրամներն գանձելու սիրով մեզ գովել ու խարել»։

Ուստի վերոյհիշեալ կը մերժեմք և չեմք ընդունիր այդ օրինակ մի քմայածին և անպատուաբեր զըրպարտութեանց հեղինակն ըլլալ, և մեր քաղաքի երիտասարդաց համար բարերարդօրէն ըսել թէ, Ռուսճուգի երիտասարդներէն աւելի ողջախոհ են քան թէ բոլշախոհ 'ի բաց առեալ մի քանի յարգելի բացառութիւններ որոց համար արդէն մեր համակրանքը շատ են։

Ա.յսու կը խնդրեմք յանուն տեղւոյս արդարարդարատէր երիտասարդութեան որ ներկայս հիւրընկալեք Ձեր պատուական Հանդիսի մի անկիւնառ 'ի բուժումն մեր վիրաւորեալ պատերու, և հանդարտօրէն կրնամք յայտարարել թէ այդ օրինակ լրբութեանց հեղինակներն տեղւոյդ բարոյականի դէմ հեատոներն ու թիկնածուներն են։

ՄՆԱՄ ՅԱՐԳԱՆՕՔ

Ի դէմս Հայ Եկեղեցաբարեգործեան

ՇԱՆԹ

Անցեալ Դեկտ. ամսոյ 20ին տեղւոյս ազգայնոներէն Մեծ. Կարապետ Մանուկեան ծիրախոտի գործարանապետ որոյ վերայ ժամանակէ մը հետէ յանակընկալս ծանրացեալ էր անողոքելի սիրտ մը, ամենայն տարապայման ջանից ու խնամոյ հակառակ շարաթ գիշեր փակեց աչքերն 'ի յաւիտենականութիւն 'ի հասակի 53 ամայ 'ի խոր սուգ թողլով բովանդակ տունն և բազմաթիւ ազգականներն ու բարեկամներն. կը հայցեմք երկնից մխիթարութիւնն հանգուցելոյն ընտանեայ և զաւակաց։

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ

ԴԱՎՐԷԺ 28 ՆՈՅ. 1891

Պարսկահայեր թէպետ թուով շատ քիչ են, այլ բաղդատմամբ Տաճկահայ եւ Ռուսահայ եղբարց, շատ անդորր եւ հանգիստ մի կենցաղավարութիւն ունին, 'ի շնորհս Նորին Արեգակնափայլ Վեհափառութեան Նասրէտտին Շահի։ Այս վերջերս մեք այցելած լինելով Ատրպատականի Դավրէժ քաղաքը, կը փափաքիմք նկարագիրն անել եւ ինչ ինչ կէտերու վրայ մեր կարծիքներն պարզել։

Դաւրէժ ունի երկու Հայաբնակ թաղեր, մին կը կոչուի ներքին թաղ, Պարսից լեզուաւ զալի. միւսն՝ արտաքին թաղ, Պարսից լեզուաւ՝ լէյլի ապատ կամ լիլավա։

ՆԵՐՔԻՆ ԹԱՂ.— Ունի մօտաւորապէս 400 տուն Հայ բնակիչ. քիչ շատ բարեկեցիկ դասի պատկանող. այս թաղի մէջ է եւ Առաջնորդարանը, ուր կը նստի Ատրպատականի վիճակաւոր Առաջնորդն՝ որ է այսօր Դեր. Տ. Ստեփաննոս Սրբազան Մխիթարեան, այր յոյժ գործունեայ եւ ազգասէր, որոյ մասին 'ի վերջոյ կը գրեմք։ Կայ եւ մի եկեղեցի առաջնորդանիստ, յանուն Ս. Աստուածածնայ. երեք քահանայք կը պաշտօնավարեն ասա, երկուսն՝ գիւղացի, մին՝ բնիկ Դավրիժեցի եւ երեքն ալ ազէտ են խեղճ եւ միանգամայն ազքատոգի, Դաւրիժու Հայութիւնը անհրաժեշտ պէտք ունի բանիրուն եւ ուսեալ քահանայից. կ'անգիտանամք թէ ընծայարաններ կա՞ն թէ ոչ. կը կարծեմք սակայն որ եթէ լինին, իսոյս կուսան քահանայութենէ։

ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ.— Պարզեմք ներքին թաղի կրթական վիճակը. ունի երկու ուսումնարան, Աբրգոն Ս. Աննայի, ուր կը պաշտօնավարեն 7 դասատուներ եւ մի վարժուհի. երկսեռ ուսանողներու թիւը կը հասնի մօտ 200ի. Նորին Վեհափառութիւն Նասրէտտին Շահ՝ տարեկան 200 թուման (մօտ 1500 ֆրանք) նուէր կապած է, որ ամեն տարի անխափան կը ստացուի. աշակերտք կ'ուսանին Հայերէն, Պարսկերէն, Ֆրանսերէն, եւ Ռուսերէն լեզուներն, Ազգային եւ ընդհանուր պատմութիւն, կրօն, ընդհանուր աշխարհագրութիւն, Հայաստանի աշխարհագրութիւն, բնական գիտութիւնք, թուաբանութիւն.

Աշակերտուհիք կ'ուսանին Հայ լեզու, կրօն, ծանօթութիւններ Հայոց պատմութեան վրայ եւ ձեռագործ։

Մեք այցելելով արական վարժարանը, անդ տեսանք շատ փոքր տղայներ ալ, որք ոչինչ չ'կարենալ սովորելէ զատ, դասատուներու ալ մեծ բեռ են իրենց միշտ անհանգիստ վարմունքով, այսպիսի մանկանց իրենց տուներու մէջ միայն աւելի լաւ էր. առհասարակ գոհացուցիչ է տեսնել աշակերտաց զգալի յառաջդիմութիւնը: Վարժարանաց հսկողութիւնը յանձնուած է Հոգաբարձական մարմնոյն, թուով վեց անձինք, որք խղճի մտօք եւ անդուլ անդադար կ'աշխատին դպրոցներու ամեն կերպ յառաջդիմութեան մասին. Հոգաբարձութիւնը կը գումարի Առաջնորդ Սրբազան հօր նախագահութեամբ, զի Նորին Գերապատուութիւնն է միանգամայն Տեսուչ վարժարանաց

Ռուսական Հիւպատոսն ալ Ռուս լեզուի համար տարեկան մի տուրք սահմանած է, որոյ քանակութիւնը, մեր սակաւօրեայ մնալովս. չ'կրցանք իմանալ հաստատ:

ԱՐՏԱՔԻՆ ԹԱՂ.— Այս տեղ կայ մօտաւորապէս 300 տուն Հայ բնակիչ, առհասարակ աղքատ եւ միջակ դասակարգէ, ունին մի եկեղեցի յանուն Սուրբ Սարգսի եւ կան երկու՝ բառին կատարեալ նշանակութեամբ արգէտ քահանայք, աւելի դրամ շահելու հետամուտ, զանց կ'առնումք գրել այս եկեղեցւոյն մէջ մի կիրակի օր մեր լսածներն (անվայել խօսքեր) մի գէր եւ կարճահասակ քահանայի բերնէն. մի միակ Ս. Առաջնորդ հօր ուշադրութիւնը կը հրաւիրեմք, իբր թէ այդ քահանայն շատ ազդեցիկ լինելով, իւր անկարգ ընթացքը չեն կարող քննադատել. բայց պէտք է գիտնալ թէ Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ օրէնք ամեն բանէ բարձր են, մանաւանդ այդ օրինաց ճշգիւ գործադրող մի Եպիսկոպոս-Առաջնորդ ալ, փառք Աստուծոյ կը գտնուի 'ի Դավրէժ:

ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ.— Արտաքին թաղն եւս ունի երկսեռ ուսումնարաններ 160ի չափ աշակերտ եւ աշակերտուհիներով. 4 դասատու եւ մի վարժուհի կը պաշտօնավարեն այս դպրոցներու մէջ: Ներքին թաղի վարժարանի լեզուներ եւ գիտութիւններ այս տեղ ալ կ'աւանդուին, 'ի բաց առեալ բնական գիտութիւններն. արտաքին թաղն ալ ունի Հոգաբարձութիւն հինգ անդամէ բաղկացեալ, որք նոյնպէս իւր ովանն կ'աշխատին վարժարանաց բարելաւութեան համար, սատ մի փոքր դիտողութիւն ընել աւելորդ չեմք համարիր, մեք կը փափաքէինք որ երկու թաղերու վարժարանաց Հոգաբարձութիւնք միացեալ լինէին, այսինքն 3 անդամ ներքին թաղէն 3 անդամ ալ արտաքին թաղէն կազմէին մի Հոգաբարձութիւն եւ երկու թաղի ուսումնարաններն յառաջ տանէին, շատ լաւ կ'ընէր այս կերպը. զի ամեն բանի մէջ միութեամբ գործելն լաւ է, բայց մեք. Հայերս, ո՞ր գործի մէջ միաբան գործելն կը սիրեմք. . . . :

ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍՐԲԱԶԱՆ.— 1886 թուականէն 'ի վեր աստ Առաջնորդ է այս ժրաջան Եկեղեցական. յընթացս իւր հնգամեայ պաշտօնավարութեան, գործած է անդր քան զչափ եւ արդարութեան պարտք կը համարեմք յիշել թէ Նորին Սրբազնութիւն՝ ամեն գործի մէջ Հայութեան վարկը բարձրացուցած է. Հայ անունը բարձր բռնած է, այնպէս որ իւր Առաջնորդութեան օրով կառավարական բարձրագոյն ատեաններու մէջ այսօր Հայը աւելի պատիւ ունի քան Պարսիկը. եւ շնորհիւ Նորին Գերապատուութեան, ամեն խնդիր միշտ դէպի Հայն նպաստաւոր կը լուծուի. Ստեփաննոս Սրբազանի գործունէութիւններն թուել յօդուածիս նպատակէն դուրս է, միմիայն այսչափ պէտք է ասել որ Հովիւ քաջ եղած է Ատրպատականի համար, տակաւին Եպիսկոպոս է, կը գործադրէ իսկոյն ինչ որ կը յղանայ, ցաւ եղաւ մեզ տեսնելն որ Դավրիժու Հայութիւնը պէտք եղածին չափ յարգանք տալ չ'գիտեր իւր Ս. Առաջնորդին, յիրաւի Նորին գերապատուութիւն գործելու համար Դավրէժցւոց յարգանաց պէտք չ'ունի, բայց եթէ սոքա եւս պատուեն իրենց Առաջնորդն, որպէս պարտ է, մեծ քաջալերութիւն կը լինի Նորին Սրբազնութեան որ առաւել եւս կը գօտեւորի. մեք որչափ իմացանք ճշմարիտ բարեկամ քիչ ունի Սրբազանը, սակայն վհատիլ չ'գիտեր, անխոնջ մշակ է, իթէ ամբողջ Դավրէժցին թշնամի լինի իւր անձին, Սրբազանը ամենեւին չ'նահանջեր, ճշմարիտ առաջնորդ է բայց արժանի է մշակն վարձու իւրոյ, նիւթապէս չ'քաջալերուիր Ստեփաննոս Սրբազան, բայց ինչո՞ւ գէթ բարոյապէս չ'քաջալերուի. . . . . . :

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՎԻՃԱԿ.— Վերջացնելով մեր յօդուած, չ'մոռանանք յիշել նաեւ երկու թաղերու ալ առանձին առանձին ընթերցարանները, ուր 'ի շաբաթու երեք անգամ կը հաւաքուին Դավրիժեցիք, գլխաւորաբար երիտասարդութիւնը, լրագրեր եւ գրքեր կարդալու. կը ստացուին բոլոր Հայ թերթերը հրատարա'կուալք յԵւրոպա եւ յԱմերիկա. ներքին թաղի ընթերցարանը ունի 1000ի չափ գրքեր կան նաեւ փառաւոր լուսանկար եւ վիմագիր թագաւորաց եւ մեր Հայրապետաց պատկերներ: Այս ընթերցարանի կառուցման եւ բացման պատճառ՝ Տաճկահայ նշանաւոր ազգայիններ եղած են, Մեծ. Տիար Յովակիմ Ֆէնէրճեան եւ հանգուցեալ Տիար Յակոբ Հաճեան, 17 տարի առաջ Դավրիժեցւոց մեծ ծառայութիւն մատուցած են ընթերցարանի գաղափարը յղանալով եւ բանալով եւ Պոլսէն, Թիֆլիզէն նշանաւոր գրքեր բերել տալով: Տիար Յովակիմ Ֆէնէրճեան այսօր Հոգաբարձութեան անդամ է եւ խղճի մտօք կ'աշխատի վարժարանաց յառաջդիմութեան եւ այլ հաստատութեանց բարելաւութեան. սակայն Դավրիժեցի Հայը, եթէ չ'ասեմք բուն բանը անտարբեր գտնուած է միշտ Տիար Յ. Ֆէնէրճեանի. օգտակար ձեռնարկներուն եւ ազգաշահ գործերուն, Դավրիժեցին ոչ միայն չէ օգնած նմա, այլ մինչեւ իսկ խոչնդոտ եղած է, առանց 'ի հարկէ հաշիւ կարենալ ընելու որ Տիար Ֆէնէրճեանի նման այդպիսի խոչնդոտներ նշանակութիւն չունին, Ֆէնէրճեան նշանաբան ունի իրեն աշխատիլ խղճի մտօք եւ կատարել այնպիսի ձեռնարկներ որք քաղաքացւոց միշտ օգտակար լինին, քաղաքիս մէջ պատկառելի դիրք ունի մեծին եւ փոքրին առջեւ, եւ այս՝ յիրաւի. իրաւամբ կը վայելէ ժողովրդականութիւն, երանի թէ Դավրիժեցիք գիտնային օգտուիլ նորա փորձառութիւններէն եւ հանճարեղ խորհուրդներէն:

Առհասարակ մեք նկատեցինք որ Պարսկահայը աւելի Ռուսահայն կը համակրի քանթէ Տաճկահայն. այս վերջինը ինչ առաւելութեամբ ալ օժտեալ լինի, արժէք չ'ունի իւր Պարսկահայ եղբօր առաջ, (Ֆէնէրճեան Տիար Յո-

վակիմ իւր այդ ամեն առաւելութեամբք, Ռուսահայ լինելու էր. Տաճկահայ լինելն յանձանք է) եւ զարմանալի բան, Պարսկահայը (Պարսկահայ ասելով չ'մեղանչեմ, գոնէ Դավրիժեցի Հայը) կը գուրգուրայ Ռուսահային վրայ, բայց Թողումք գուրգուրալը, կ'ատէ զՏաճկահայը, չ'կրցանք ըմբռնել է՞ր այս խտրութիւն, այս երեւոյթ շատ ցաւալի է, կը յուսամք որ եղբայրութիւնը ժամանակիս պահանջներուն աւելի հմտանալով, քիչ քիչ վերջ կը գնէ այս խտրողական ոգւոյն, եւ երկուսը մէկ եղբայր կը ճանաչէ իրեն համար թէ Տաճկահայը եւ թէ Ռուսահայը եւ հաւասար սիրով կը սիրէ զնոսա։

Դավրիժու եղբայրութիւնը գոնէ ըստ երեւոյթին ազգային ինքնաճանաչութեան ոգի ցոյց կուտայ, մաղթեմք որ այս ոգին աւելի զարգանայ եւ ամենքը միմեանց ձեռք տան ազգօգուտ գաղափարներ յղանալու։

Քիչ հնալով 'ի Դավրէժ, մենք չը կարողացանք շատերու հետ տեսնուել, անշուշտ լաւագոյն զգացմամբք եղբայրարդք կը գտնուին, այդպիսեաց պարտականութիւններ իրենց գաղափարակիցներ ճարել եւ ազգաշահ գործեր յղանալ, ժողովներ անելու է, խորհրդակցութիւն կատարելու է եւ 'ի գոցանէ լաւագոյն արդիւնքներ յառաջ բերելու է, քնանալու ժամանակ չէ, Թող ամեն Պարսկահայք, ինչ որ չեն կրնար անել իրենց Ռուսահայ եւ Տաճկահայ եղբարք, մոռնալու չէ թէ ժամանակն այ թանկ է։

ՈՒՂԵՒՈՐ

ՆՈՐ ՏԱՐԻ

Տարի ըսելով կը հասկնանք այն ժամանակամիջոցը որ երկիրս կը կատարէ արեւի շուրջ։

Արեւը նկատելով իբր մի շրջանակ, չորս կէտերի բաժանուած եւ երկիրս ալ այդ շրջանակում ընթացողն եւ իւր վրայ 24 ժամն անգամ թաւալողն. երկիրս այդ չորս կէտերի որ մէկից որ սկսի եւ վերստին դառնայ գայ նոյն կէտի վրայ. այդչափ ժամանակամիջոցին կըսեն Տարի։ եւ այդ չորս կէտերի անուններ տուած են. գարուն, ամառ, աշուն եւ ձմեռ։ Եւ այդ չորս կէտերն կը կազմեն բնական տարուայ չորս եղանակներն. որոնք աստղակամարի վրայ իբր հաստատ կէտեր ընդունուած են աստղաբաշխօրէն։

Աստղաբաշխական դրութենէ հաստատուած է քաղաքական տարին. որով մարդիկ կը չափեն եւ կը հաշուեն ժամանակը։

Աստղային կամ արեգակնային տարուայ համար տարբերութիւն չունի չորս կէտերի որ մէկից որ սկսուի, նոյնպէս քաղաքական տարուայ համար. բայց գիտօրէն վայելուչ է որ դարձեալ երկուքն ալ մի որոշ կէտից ըսկսուի. որպէսզի քաղաքային տարին աստղային տարուայ հետ համընթաց լինի. այլ ոչ այժմեանի նման չփոթալից։ Մեզ կը մնայ որոշել թէ, ո՞ր կէտէ սկսինք հաշուել արեւի տարեշրջանը իբրեւ բնական եւ իմացականութեան տէր էակ՝ բնութիւնն գիտող եւ վայելող։ Ամենապատշաճն եւ ճիշտն է որ պայտինք սկսիլ ու տօնել գարնան եղանակի սկիզբէ. եւ այդ օրն կոչել ՆՈՐ ՏԱՐԻ. զի այս եղանակ է ծերացեալ եւ փտեալ տարին կ'սկսի տեղի տալ եւ մանկանալ. եւ մեռեալ բնութիւնը վերակենդանանալ։

Մեր նախնիք աւելի գիտող եւ հասկացող են եղել քան զմեզ. զի նոքա մինչ գարնանամուտին կը տօնէին նոր տարին. եւ այս սովորութիւն դեռ մասամբ անաղարտ պահուած է կեդրոնական Հայաստանի մէջ զի Մարտ ամսոյ 9|21ին որ գրեթէ մինչ մեծ պահոց միջինքին կը պատահի, այդ օրը Հայ ժողովուրդը եւ Հայ գիւղացին մեծ ուրախութիւններ կ'ընէ եւ այդ օրը կը շնորհաւորէ ըընութեան առաջին օրը. տուներէ դուրս գալով ձիարշաւ կը խաղան. արտերն ու դաշտերն ժուռ գալ կ'երթան. ընտանի անասուններուն «խամէ» կը հանեն. եւն''եւն'' միմեանց «բարի տարի» կը մաղթեն։ Մեզ կը մնայ արդ իմանալ թէ. ե՞ր արդի գիտուն եւ զարգացեալ կարծած ազգերնիս տարուայ ծերացեալ եւ մեռեալ եղանակէ կը սկսի տօնել քաղաքական տարին, — ինչպէս վերեւ ասացինք թէ մեր նախնիք գարնանամուտէ կ'սկսէին նոր տարին, նոյնպէս նաեւ օտար ազգերն, բայց ամեն ազգերի մէջ պատահած այլեւայլ երեւելի անցքերն ու դէպքերն տեղի տուեր տարուայ առաջին օրը փոփոխել, այնպէս որ ամեն ազգ իւր փոփոխած օրից սկսաւ տարեգլուխ ըսկսիլ։ Եկաւ մի ժամանակ որ ո՛չ միայն այլեւայլ ազգերի

(Կը շարունակուի)

ԾԱԽՍՈՒ ԳԻՐՔԵՐ

Հետեւեալ գիրքերն կը ծախուին «ԴԱՆՈՒԲ»ի խմբագրատան մէջ. իրենց առջեւ նշանակուած գիներով եւ փոստի ծախքը խմբագրատունէն վճարուելով։

ՐԱՖՖԻ, ԽԵՆԹԸ (Արկածներ վերջին Ռուս-Թուրքական պատերազմից) եւ ՋԱԼԱԼԷԴԴԻՆ (Մի պատկեր նորա արշաւանքից). երկուքը միասին մէկ հատորի մէջ ամփոփուած. Բ. Տիպ։ 8 ֆր. 50 սանթիմ։

ՐԱՖՖԻ, ՂԱՐԱԲԱՂԻ ԱՍՏՂԱԳԷՏԸ Անդրկովկասեան պատմական վէպ. 5 ֆր. 50 սանթիմ։

ՐԱՖՖԻ, ԿԱՅԷՆԻ ԿՏԱԿԸ 5 ֆր. 50 սանթիմ։

ՐԱՖՖԻ, ՄԻՆՉ ԱՅՍՊԷՍ, ՄԻՆՉ ԱՅՆՊԷՍ Պատկերազարդ վէպ. Թիֆլիսի վաճառականների կեանքից։

ՐԱՖՖԻ, ԿԱՅԾԵՐԻ ՎԵՐՋԸ 1 ֆր. 50 սանթիմ։

ՐԱՖՖԻԻ Պատկերը խոշորագիր. 2 ֆր։

» » աւելի փոքրը. 1 ֆր.

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻՒԹԻՒՆՃԻԷՖ

ՌՈՒՍՃՈՒԿ ՏՊԱՐԱՆ Մ. Ս. ԹԻՒԹԻՒՆՃԻԷՖԻ

Руссе. Печатница В. „Танупъ“